

## Անդրանիկ Վարդանյան Պատմ. գիտությունների թեկնածու, դոցենտ

### ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒԽՈՒՄԱՍԽՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴ (1922 թ.) (Մեթոդաբանական մոտեցում)

Պատմական բարդ գործընթացների, երևոյթների ուսումնասիրման, չափագըրման, քաջնված բովանդակային հնարավորությունների բացահայտման համար ժամանակակից գիտության մեջ հաճախ օգտագործում են մաթեմատիկական-վիճակագրական և մոդելավորման մեթոդներ:

Հասարակական կյանքի որոշ կողմների մաթեմատիկական մոդելավորումը հին ժագում ունի: Մարդը շատ վաղ է իմացել ու զնահատել նմանության մեջ ուժը: Գրտելով բազմաթիվ արդյունավետ միջոցներ՝ նմանության միջոցով մարդը փորձել է ճանաչել աշխարհը, այնուհետև այն ենթարկել իրեն: Դեռևս Արիստոտելն իր բնագիտական աշխատություններում կիրառել է մոդելների մեթոդը, իսկ մոդելավորման մեթոդի վերաբերյալ արել է առանձին դատողություններ: Մինչև վերածննդի դարաշրջանը մոդելի մասին պատկերացումները եղել են պարզունակ: Միայն ճշգրիտ բնագիտության հայրը՝ Գալիլեո Գալիլեյը, կարողացավ ստեղծել նոր տիպի մոդել, որը հնարավորություն տվեց թափանցել բնության երևույթների գաղտնիքները, բացահայտել դրա օրենքները: Այդ ժամանակներից մոդելավորումը հաստատացես մտավ գիտության մեջ: Մոդելավորումն իբրև գիտություն լայն ճանաչում ստացավ XIX-XX դարերում՝ կիրառություն գտնելով համարյա բոլոր գիտություններում:

Չնայած կիրառությանը՝ մոդելավորումը դասվում է համեմատաբար նոր գիտությունների շարքին: Այն խիստ գիտական է և սերտորեն առնչվում է տրամաբանությանը ու մաթեմատիկային: Մոդելավորումը ոչ թե ճշգրիտ նմանակում կամ պատճենահանում է, որից երբեք չի կարող նորարարություն կամ հայտնագործություն ծնվել, այլ օրիգինալի հիման վրա ստեղծում է որակապես նոր մոդել (օրինակ՝ թռչունի մոդելն ինքնարիջ ստեղծման համար): Ներկայումս մոդելավորումը լայն կիրառություն գտնելով շատ գիտություններում՝ սկսել է կիրառվել նաև պատմական գիտության մեջ: Մոդելավորման տեսական-մեթոդոլոգիական, գնուեղողգիական (ճանաչողական) և մեթոդատեխնիկական հիմնահարցերին, որպես ընդհանուր գիտական մեթոդ, նվիրվել է մեծ քանակությամբ գրականություն<sup>1</sup>: Ուստի պատմագրությունը այդ ուղղությամբ առաջին քայլերն է կատարում<sup>2</sup>, իսկ հայ պատմագրությունն այդ մեթոդին բոլորովին չի անդրադարձել:

<sup>1</sup> Штольф В. А., Роль моделей в познании, Л., 1963; Он же, Моделирование и философия. М.; Л.; 1966; Глинский Б. А., Моделирование как метод научного исследования, М., 1965; Он же, Моделирование сложных систем, М., 1978; Үսում Ա. Ա., Логические основы метода моделирования, М., 1971; Бирюков Б. В., Геллер Е. С., Кибернетика в гуманитарных науках. М., 1973, Կօդրյան Ի. Ռ., Философские вопросы математического моделирования, Кишинев, 1978, յալոմ Ի. Մ., Математические структуры и математическое моделирование, М., 1980, Բագարու Կ. Բ., Аналогии и модели в познании. М., 1981, Նեյմին յ. Ռ., Модели в науке и технике. История, теория, практика. Л., 1984.

<sup>2</sup> Завьялова Մ. Ռ., О моделировании в историческом исследовании: автореф. канд. дис. Томск. 1970; Она же, Метод ретроспекции и моделирование в историческом исследовании (Вопросы методологии истории и историографии). Томск, 1974, вып. 3; Товма Տ. Դ., Роль моделирования в познании социально-исторических яв-

Մոդելավորումը իբրև ճանաչողության գիտական մեթոդ, առավել լայն կիրառություն ունի տնտեսագիտությամ<sup>1</sup> և սոցիոգիայի բնագավառում<sup>2</sup>:

Անորոշականալով մոդել հասկացության ձևակերպմանը՝ նկատենք, որ այն գիտական գրականության մեջ միանշանակ ձևակերպում չի ստացել: Ա. Ի. Ուենովը առանձնացրել է տարրեր հեղինակների 37 ձևակերպում<sup>3</sup>: Այն ընկալվել է մերթ որպես որոշակի տեսակի կառուցվածք, մերթ որպես իդեալական նմուշ, որից պատճենահանվում են այլ օրենքներ և վերջապես ընկալվել է օբյեկտի նյութական վերարտադրում՝ անկախ նրանից, թե ինչ նպատակի համար: Յենց վերջին դեպքում է, որ մոդելավորումը ծերք է բերում ամենաանհջախական կապ ընդհանուր գիտական ճանաչողության մեթոդի հետ: Յ. Ստախովյակի բնութագրությամբ մոդելը միշտ ինչ-որ բանի մոդել է, բնական կամ արհեստական օրիգինալներ ներկայացնող, որն իր հերթին կարող է մոդել դառնալ: Մոդելն ընդգրկում է ոչ թե օրիգինալի ողջ հատկությունը, այլ այն մասը, ինչը բնորոշ է մոդելին: Մոդելները միանշանակ համապատասխանում են օրիգինալին<sup>4</sup>: Իսկ առավել տարածված է այն տեսակետը, թե մոդելը համակարգ է, որի հետազոտությունը միջոց է համարվում այլ համակարգի մասին լրատվություն ստանալու համար<sup>5</sup>:

Մոդելը կառուցվում և օգտագործվում է այն ժամանակ, երբ հետազոտվող հարցի մասին գոյություն չունի մշակված տեսություն և արդյունավետ մեթոդ, երբ հիմնահարցի ուսումնասիրումը անհնար է դառնում համապատասխան փորձի բացակայության պատճառով:

Մոդելը կառուցվում է նաև այն դեպքում, երբ օրիգինալից հնարավոր չէ ստանալ այն լրատվությունը, ինչը հետաքրքրում է ուսումնասիրողին: Նման դեպքերում մոդելը կիրառվում է կամ տեսության ֆունկցիայի փոխարեն, կամ տեսության կառուցման նպատակով, կամ տեսության անկատար, ոչ ավարտուն լինելու պատճառով: Տեսության անավարտ վիճակը արտահայտվում է այն դեպքում, երբ առկա են օբյեկտին վերաբերող որակական հետազոտություններ, բացակայում են քանակական (մաթեմատիկական) վերլուծությունները կամ ընդհակառակը:

Ընդգծենք, որ մոդելն օգտագործվում է նաև կատարյալ ու ավարտուն տեսության առկայության դեպքում: Այն օգտակար է ինչպես օբյեկտի որակական, այնպես էլ քանակական պարամետրերի բնութագրման համար և միջանկյալ օղակ է դառնում տեսության և իրականության միջև: Այս դեպքում մոդելը հիմք է ծառայում գոյություն ունեցող տեսությունը մեկնաբառնելու՝ նպատակ ունենալով կամ կատարելագործել այն, կամ մեկնաբառել, կամ կոորդինացնել:

лений (методологические вопросы науки) Саратов, 1977, вып. 5; **Ковалъченко И. Д.**, О моделировании исторических явлений и процессов («Вопросы истории», 1978, N 8) и др.

<sup>1</sup> **Добрковольский В. К.**, Экономико-математическое моделирование. «Вопросы методологии», Киев, 1975; **Левицкий Е. М.**, Адаптация в моделировании экономических систем, М., 1977; **Юдин Д. Б.**, **Юдин А. Д.**, Экстремальные модели в экономике, М., 1979; **Постышев Л. П.**, Основы экономико-математического моделирования, М., 1979; **Майминас С. В.**, Методологические проблемы построения и применения экономических моделей, Вильнюс, 1979; **Методы анализа взаимодействия экономических систем**. Новосибирск, 1980; **Дадаян. В. С.**, Глобальные экономические модели, М., 1981 и др..

<sup>2</sup> Математика в социологии. Моделирование и обработка информации, М., 1977, **Филатов Д. А.**, Методологические вопросы моделирования объектов прошлого, настоящего и будущего в социальной науке. Саратов, 1977; **Цыба Т. В.**, Математико-статистические методы в социологическом исследовании, М, 1981; **Молчанов В. И.**, Системный анализ социологической информации. М., 1981, и др.

<sup>3</sup> **А. И. Уемов.**, Логические основы метода моделирования. М., 1971, с. 22-34.

<sup>4</sup> **H. Stachowiak.**, Gedanken zueiner allgemeinen Theorie der Modelle—“Studium Generale”, 1965, h. 7, s. 438.

<sup>5</sup> **А. И. Уемов.**, Логические основы метода моделирования. М; 1971, с. 48.

Մողելներն օգտագործվում են նաև այն օբյեկտների հետազոտման ժամանակ, որոնք անհատչելի են փորձարկման համար: Օբյեկտը կամ շատ փոքր է, կամ շատ մեծ, կամ էլ գործընթացը շատ երկար է տևում, որի հետազոտումն անհիմաստ է և այլն: Այս պարագայում մողելները համակարգեր են, որոնց հետազոտումը լրացուցիչ ու ամբողջական պատկերացում է տալիս հետազոտվող օբյեկտի, օրիգինալի նաև մասին:

Վերջապես, մողելների կիրառումը պայմանավորված կարող է լինել նաև տնտեսական նկատառումներով, որոնք այնքան էական են մեր ժամանակներում: Ուրեմն ճանաչողության գործընթացում մողելները բավականին տարրեր են իրենց դերով և իրականացնան եղանակով, բայց բոլորն էլ ունեն հետազոտական բնույթ: Մողելավորման ժամանակ հետազոտվող օբյեկտը (համակարգ, օրիգինալը) փոխարինվում է մեկ կամ մի քանի այլ օբյեկտներով: Վերջիններս համարվում են մողելներ: Մողելը փոխարինում է նախնական օբյեկտին՝ հետապնդելով որոշակի հետազոտական նպատակ: Անհրաժեշտության դեպքում կարելի է ստեղծել նաև այլ մողել:

Եվ այսպես, մողելավորման գիտավոր տարրերից կողմը, որպես գիտական ճանաչողության մեթոդ, այն է, որ հետազոտողը իրեն հետաքրքրող օբյեկտի ուսումնասիրման համար օգտվում է այլ օբյեկտից, որը տվյալ դեպքում փոխարինում է առաջինին: Առաջին օբյեկտը պայմանականորեն անվանում են օրիգինալ: Մի օբյեկտի միջոցով մյուս օբյեկտի ուսումնասիրման համար օբյեկտիվ հիմք է համարվում կապերի, հարաբերությունների և երևույթների ամբողջական ու համակարգային հատկությունը: Օբյեկտների ամբողջական ու համակարգային հատկությունը պայմանավորված է դրա բաղադրիչների միջև գոյություն ունեցող օրինաչափություններով, առաջին հերթին՝ նմանության օրինաչափությամբ:

Մողել-օրիգինալ հարաբերությունների հիմքում ընկած է համապատասխանությունը, իսկ դրանց կապերը ոչ թե բնական են, այլ պայմանավորված են մարդկային գործոնով: Մողելում հայտնվում են օրիգինալին բնորոշ հատկություններ (ազոմօրֆիզմ), որոնք բառացի նշանակում են ծևերի և կառուցվածքների միատեսակություն, բայց միաժամանակ մողելը չի համարվում օրիգինալի կրկնություն, քանի որ համարվում է յուրահատուկ միջոց օբյեկտի մասին միջնորդավորված գիտելիքներ ստանալու համար: Հետազոտության հաջորդ փուլում անցում է կատարվում որակականից դեպի քանակական փուլ: Հետազոտությունը կատարվում է մողելի վրա: Վերջինիս առանձնահատկությունն այն է, որ օրիգինալի փոխարեն հետազոտվում է մողելը, բայց ստացված գիտելիքները ունենալով ինքնուրույն արժեք՝ վերագրվում են օրիգինալին:

Մողելավորման գործընթացում ենթադրվում է որոշակի հետազոտական խնդիրներ ունեցող սուբյեկտ, հետազոտման օբյեկտ և մողել: Մողելավորման գործընթացը սկսվում է խնդրի հստակ ձևակերպմամբ: Այնուհետև ներկայացնելով հետազոտվող օբյեկտի ուսումնասիրման աստիճանը և այժմեականությունը՝ հետազոտողը սկսում է ճանաչողության գործընթացը՝ այդ նպատակին ծառայեցնելով արդյունավետ մեթոդով: ճանաչողության սկզբնական փուլը դիտարկումն է, որից հետո անցում է կատարվում դեպի փորձը: Հետազոտության այս փուլում ակտիվորեն դրսևորվում է սուբյեկտի մասնակցությունը ճանաչողության գործընթացին, որի ընթացքում բացահայտվում են տարրեր կապեր, հարաբերություններ, որոնք հնարավորություն են

տալիս օրենքներն ու օրինաչափությունները յուրովի մեկնաբանել, կատարել տեսական դատողություններ, ուսումնասիրել էական հատկությունները:

Եթե հետազոտության առաջին փուլում կարևոր օբյեկտի նախնական ուսումնասիրումն ու հետազոտական դժվարությունների ֆիքսումն էր, ապա հաջորդ փուլում կարևոր նշանակություն է ստանում մոդելի ստեղծումը, այսինքն օրիգինալից այնպիսի ցուցանիշների առանձնացումը, որոնք ոչ միայն էական են տվյալ խնդրի համար, այլև հետազոտական առումով հեշտ լուծելի:

Մոդելի ստեղծումից հետո սկսվում է հետազոտման գործընթացը, որտեղ կարևոր է տարրեր երևույթների առկայության համանմանության հաստատումը, որը հետացնում է մոդելի կառուցումը (ստեղծումը) և ունի էվրիստիկական (հուշող հարցերով բացատրելու մեթոդ) նշանակություն: Մոդելի կառուցումը ոչ հեշտ է, ոչ էլ ինքնանպատակ: Այն պայմանավորված է մի շարք գործոններով, նաև խնդրի առանձնահատկություններով: Մոդելավորման ժամանակ օրիգինալից առանձնացվում են այն կապերն ու հարաբերությունները, որոնք հետազոտվելու են, և հաստատվում է որոշ հատկությունների ու հարաբերությունների համանմանությունը մոդելի հետ: Մոդելավորման ընթացքում կատարվում է երկակի իդեալականացում, մի դեպքում մոդելավորող օբյեկտի (օրիգինալի), մյուս դեպքում մոդելի համար, որտեղ առաջնային դերը պատկանում է տեսական դատողությանը:

Մոդելի ստեղծման ժամանակ կարևոր է չափի պահպանումը: Եթե մոդելը ցուցանիշների քանակով մոտենում է օրիգինալի բարդությանը, ապա այն տեսնենց կունենա նույնանալու օրիգինալին: Իսկ եթե շատ հեռու լինի օրիգինալից, կմոլորեցնի (մոլորության մեջ կընկնենք)<sup>1</sup>: Այդ պատճառով պետք է ստեղծել այնպիսի մոդել, որը չկրկնելով օրիգինալի բոլոր առանձնահատկությունները, հնարավորություն տա հետազոտել առաջադրվող խնդիրը: Մոդելավորման ընթացքում պետք է ոչ միայն ցուցանիշներն առանձնացնել, այլև ներկայացնել դրանց համակարգն ու կառուցվածքը: Մոդելը վերլուծելիս հնարավոր է նաև օրիգինալի բաղադրիչների օգտագործում, քանի որ մոդելի միջոցով ստացված գիտելիքները պատկանում են հենց օրիգինալին: Այդ պատճառով տրամաբանական է նաև օրիգինալին մոդել համարելը:

Մոդելի հետազոտման փուլում որպես ճանաչողության միջոց ստացած գիտելիքները տարածվում են օրիգինալի վրա: Մոդելի հետազոտումը ստեղծագործական գործընթաց է և կոչված է բացահայտել օրիգինալի բարնված լրատվությունը: Մոդելը կարող է լինել նյութական կամ ոչ նյութական կազմավորում: Օրիգինալի և մոդելի հատկանիշների միջև գոյություն ունեցող տարբերությունը հնարավոր է բացահայտել մոդելի միջոցով, որի ընթացքում հնարավոր է կիրառել այնպիսի մեթոդներ ու գործիքներ, որոնք նախկինում հնարավոր չեր օգտագործել: Մոդելավորման միջոցով օբյեկտը դարձնում է փորձարկման առարկա: Այն ձերբագատվում է հետազոտումը դժվարացնող ցուցանիշներից, նաև այլ գործոնների ազդեցությունից:

Արդեն ասվել է, որ մոդելավորման ժամանակ ստացված գիտելիքները վերաբերում են մոդելին և բնութագրում են նրան: Սակայն քանի որ հետազոտողին առաջին հերթին հետաքրքրում է ոչ թե մոդելը (սա միջոց է), այլ օբյեկտը, այդ պատճառով մոդելի հետազոտման ժամանակ արագացված գիտելիքները տեղափոխվում են

<sup>1</sup> R. A. Hinde, Ethological Models and Concept of “Drive”. “The British Journal for the Philosophy of science” 1995, vol. 6, N 24, p 323.

օրիգինալի վրա, որպես վերջինիս մասին գիտելիքներ: Մողելի տարրերի և հարաբերությունների կապերը մյուս մողելի (օրիգինալի) հետ հաստատվում են հետազոտողի մեկնաբանության միջոցով: Մողելի էվլիստիկական նշանակությունը արտահայտվում է նրանում, որ հայտնաբերելով մի շարք ընդհանուր հատկանիշներ մողելի և օրիգինալի միջև՝ հետազոտողը օրիգինալին վերագրում է նոր հատկություններ, որոնք հայտնաբերվել են մողելը հետազոտելու ընթացքում: Մողելի հետազոտման ժամանակ ստացված գիտելիքներն արդեն ունեն ոչ թե հավանական, այլ հուսալիորեն ճշգրիտ բնույթ, որով այդ մեթոդը ստանում է լայն տարածում: Մողելը ստեղծելուց հետո անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն գործոնների վրա, որոնց հետ կապ ունեն ստացված արդյունքները: Այստեղ շատ բան կախված է հետազոտողի հմտությունից, տեսական պատրաստվածությունից, գիտության զարգացման աստիճանից, հաջող կառուցված մողելից: Մողելավորման արդյունքների ճշգրտության վրա ազդում են կապերի և գործընթացների որակական ու քանակական բնութագրերը: Նույնիսկ օբյեկտի գծային չափերի սովորական (փոքր չափերի) մեծացումն ու փոքրացումը կարող է ազդել մողելավորման ընթացքի վրա (մաստանության ազդանունը): Յետաքրքիր արդյունքները կարող են սխալ համարվել սխալ մեկնաբանության պատճառով:

Եվ այսպես, անփոփոխ մողելավորման գործընթացի կառուցվածքի բնութագրումը՝ նկատում ենք, որ մողելավորումն անհրաժեշտորեն պետք է անցնի հետևյալ փուլերով՝ գիտելիքների այժմեականություն, օբյեկտի անմիջական ուսումնասիրման անհնարինության արձանագրում, մողելի կառուցում օբյեկտի ցուցանիշների հիմն վրա, մողելի ուսումնասիրում, մողելավորման ակտի ավարտ, մողելի տվյալների ճիշտ լինելու ստուգում, մողելի վերաբերյալ ստացված արդյունքների տեղափոխում օբյեկտի մասին գիտելիքների վրա:

Օբյեկտների ճանաչողության տիպության անհրաժեշտ պայման է յուրաքանչյուր գիտական ճանաչողության համար: Փիլիսոփայության տեսանկյունից մողելավորումը բաժանվում է նյութական (ֆիզիկական), մաթեմատիկական և իդեալական տիպերի: Պատմական գիտության մեջ նպատակահարմար է կիրառել մաթեմատիկական և իդեալական մողելներ, որովհետև մաթեմատիկական մողելն ավելի ընդհանրական է և նրա համար միևնույն է, թե ինչպիսին է օբյեկտը: Սարդկանց նշանային գործունեությունը դիտվում է որպես մողելի իդեալական տիպ: Նշանային տիպերից առաջինն արտահայտվում է աղյուսակների, գրաֆիկների կամ այլ տեսքով, երկրորդ տիպը նշանային մողելն է, որը կոչված է լուծելու կոնկրետ խնդիրը: Նշանային մողելի երրորդ տիպը տեսության ձևական արտահայտությունն (ֆորմալիզացիա) է:

Մողելներն ըստ օրիգինալի վերաբերադրման բնույթի (բովանդակային բնութագրման) բաժանվում են նյութական սուբստանցիոն կառուցվածքային և ֆունկցիոնալ տիպերի: Ժամանակակից գիտության մեջ լայնորեն կիրառվում են կառուցվածքային, ֆունկցիոնալ, հաճախ նաև խառը տիպի մողելներ: Առավել լայն տարածում է գտնում խառը տիպի մողելների օգտագործումը, երբ միաժամանակ կիրառվում ու զուգակցվում են կառուցվածքային (օրիգինալի ներքին կառուցվածքի նմանակում) և ֆունկցիոնալ (օրիգինալի վարքագիրի ֆունկցիայի նմանակում) տիպերը: Վերջին դեպքում առավելագույնս արդյունավետ է հետազոտությունը: Որևէ մողելի իմացաբանական վերլուծության համար անհրաժեշտ է ոչ միայն պարզել մեթոդի

բնույթը, կառուցվածքը, տիպերը, այլև կատարել որոշակի ֆունկցիա, առանց որի իմացարանական վերլուծությունը կիամարվի թերի: Իսկ ֆունկցիոնալ վերլուծությունը հարմար միջոց է համարվում ընդհանուր տեսական վերլուծությունից անցում կատարելու կոնկրետին:

Այսպիսով, մոդելավորումը ունի վերսալ մեթոդ է: Դրա կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտել հետազոտվող օբյեկտի էությունը, խորացնել բովանդակային վերլուծությունը: Մեթոդի ունիվերսալությունը հավասարապես վերաբերում է նաև հետազոտության ընթացքում նրա կիրառության տեղին ու ժամանակին: Կիրառության համար հետազոտական որևէ փուլ չի նախատեսվում: Մոդելավորման մեթոդը կիրառելի է ինչպես էնախրիկ, այնպես էլ տեսական հետազոտական մակարդակում: Լայն առումով մոդելավորման միջոցով հնարավոր է չափել ցանկացած օբյեկտ ստեղծված մոդելի միջոցով:

Եվ այսպես, մոդելավորումը ընդհանուր գիտական մեթոդ է, որը կարող է կիրավել շատ գիտություններում: Բացառություն չի կարող կազմել նաև պատմական գիտությունը, եթե հետազոտության ընթացքում իրեն աղբյուր օգտագործվում են վիճակագրական հանրագումարային, հատկապես՝ նախնական քարտի տվյալները: Մեզ հետաքրքրող հարցի՝ 1920-ական թվականների սկզբի գյուղացիության սոցիալ-դասակարգային կառուցվածքը վերլուծելու համար որպես աղբյուր օգտագործվել են 1922 թ. Հայաստանում անցկացված առաջին ու իր տեսակի մեջ եզակի գյուղատնտեսական և հողային հաշվառման նախնական քարտի տվյալները: Հարցի ուսումնասիրումն ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլև այժմեական նշանակություն: Դա հնարավորություն կտա ոչ միայն բացահայտել 1920-ական թվականների խորհրդային Հայաստանի գյուղացիության ներքին կառուցվածքը, նրանց սեփականազրկումը, այլև ճիշտ հասկանալ մեր օրերում կատարված սեփականաշնորհման գործընթացը: Չնայած հարցի կարևորությանը՝ այն չի գտնվել հայ պատմաբանների ուշադրության կենտրոնում<sup>1</sup>, իսկ նրանք ովքեր գրաղվել են այդ խընդրով, չեն գտել ու կիրառել արդյունավետ մեթոդ<sup>2</sup>: Մեր կողմից առաջարկված այլ մեթոդներից բացի (օրինակ՝ համակարգային մեթոդ) զանգվածային վիճակագրական աղբյուրների ուսումնասիրման ժամանակ հնարավոր է կիրառել նաև արդյունավետ մոդելավորման մեթոդը:

Հայաստանի գյուղացիության ներքին կառուցվածքը 1922 թ. հստակ ցույց տալու համար ժամանակակից գիտության պահանջն է օգտել նույն թվականին կատարված վերոհիշյալ գյուղատնտեսական ու հողային հաշվառման ոչ թե հանրագումարային, այլ նախնական քարտի տվյալներից: Որպես զանգվածային վիճակագրական նյութ, այն հնարավորություն է տալիս կիրառել մի շարք նարեմատիկական վիճակագրական մեթոդներ, որոնցից սույն հիմնահարցը լուծելու համար անհրաժեշտ են առնվազն հետևյալ մեթոդները.

1. Ընտրանքային (բարօրոշական) մեթոդ, որը հնարավորություն կտա նախնական քարտի գլխավոր ամբողջությունից, օգտագործման անհնարինությունից և աննպատակահարմարությունից ելնելով առանձնացնել, ընտրել որոշակի սահմանափակ

<sup>1</sup> «Պատմություն և նշակույթ», հայագիտական հանդես, Ա., Երևան, 2011, էջ 74-87:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Նազարյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., Երևան, 1975:

քանակ, որը կլինի ներկայացուցական, այսինքն ճիշտ կարտահայտի գլխավոր ամբողջի հատկությունը<sup>1</sup>:

2. Մոդելավորման մեթոդ, որը հնարավորություն կտա նախնական քարտի ցուցանիշների հիման վրա ստեղծել գյուղացիության սոցիալ-դասակարգային կառուցվածքը բացահայտող նոր մոդել:

3. Նամակարգային մեթոդ և մոտեցում, երբ հնարավոր կլինի նոր ստեղծված մոդելի մի քանի ցուցանիշների միաժամանակյա ուսումնասիրման միջոցով ճշգրիտ վերականգնել գյուղացիության սոցիալ-դասակարգային կազմը: Մենք լրացուցիչ օգտագործել ենք նաև տնտեսական հզորությունը բնութագրող ցուցանիշների համահարաբերակցական կապերի վերլուծության մեթոդը<sup>2</sup>:

Հետազոտության հաջորդ փուլում պետք է դիտարկել ու հետազոտել ուսումնասիրման օբյեկտը՝ նախնական քարտը: Նշենք, որ 1922 թ. գյուղատնտեսական ու հողային համապարփակ (համատարած) վիճակագրության նախնական քարտի աղբյուրագիտական արժեքների ու լրատվական մեծ հնարավորությունների մասին արդեն գրվել է<sup>3</sup>: Այն մինչև այժմ կազմված զանգվածային վիճակագրություններից ամենալրատվականն է: Նախնական քարտն ունի 10 չհամարակալված (գլխամասային) և 278 համարակալված հարց: Երբեմն որևէ ցուցանիշ (օդինակ՝ գյուղացիական տնտեսությունը) կազմված է լինում մի քանի ենթացուցանիշներից (բացակա, առկա, բնիկ, վերաբնակիչ, եկվոր, փախստական), ինչի պատճառով ցուցանիշների թիվն էլ ավելի է մեծանում: Նման փաստերի միաժամանակյա մշակումը ցանկացած այլ ձևով անհնար է, նույնիսկ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՐՍ) օգտագործման դեպքում կապված է շատ մեծ դժվարությունների հետ:

Ելնելով առկա դժվարությունները վերացնելու անհրաժեշտությունից, երբ չի վնասվում հիմնահարցի բովանդակային կողմը, ընտրանքային մեթոդով կտրուկ կրճատվում է տնտեսությունների թիվը, իսկ նոր մոդելի կառուցման միջոցով՝ ոչ էական ցուցանիշների քանակը: Դրանից հետո հնարավոր է դառնում գյուղացիության սոցիալ-դասակարգային կազմը բացահայտել համակարգային մեթոդի միջոցով:

1922 թ. գյուղացիական տնտեսությունների նախնական քարտի մեծ լրատվությունը ոչ միայն համակարգ է իր ենթահամակարգերով ու տարրերով, այլև օրիգինալ մոդել է իր ենթամոդելներով: Սակայն ո՞չ համակարգը, ո՞չ էլ օրիգինալ մոդելը բարդության պատճառով հնարավոր չէ միաժամանակյա հետազոտության ենթարկել: Անհրաժեշտ է կառուցել նոր մոդել, որի արդյունքները կիրառելի լինեն օրիգինալ մոդելի համար: Գյուղացիական տնտեսությունների սոցիալական շերտերը բացահայտելու համար կարևոր նշանակություն ունեն չհամարակալված (գլխամասային) 10 ցուցանիշները, որոնցից առանձնացրել ենք՝ 1. Գյուղացիական տնտեսությունների կատեգորիաները (առկա, բացակա, բնիկ, վերաբնակիչ, եկվոր, փախստական), 2. Գավառը, գյուղը, 3. Ազգությունը, 4. Տանտիրոց գլխավոր գբաղմունքը, 5. Գերդաստանի արդյունաբերական բնույթը ունեցող գյուղատնտեսական երկրոր-

<sup>1</sup> Տես Ա. Առաքելյան, Վարչական գործությունների մեջ գյուղատնտեսական առաջնային գործությունների մասին օրենքը, 1991, № 1:

<sup>2</sup> Տես Ա. Խ. Վարդանյան, 1922 թ. գյուղատնտեսական ու հողային համապարփակ վիճակագրության նախնական քարտի լրատվական հնարավորությունները: «Բանբեր Երևանի համալսարանի», 1996, № 2:

դական պարապմունքը: Դժվար չէ պատկերացնել, թե գյուղացիական ցանկացած շերտի (չքավոր, միջակ, ունկոր) և ենթաշերտի (ստորին, միջին, վերին) համար ինչքան էական է, թե այդ տնտեսությունը առկա է, թե բացակա, բընիկ է, թե՝ փախստական, Արարատյան դաշտում է գտնվում, թե՝ Լոռիում, որ ազգին է պատկանում, որն է գլխավոր զբաղմունքը և այլն:

Եթե 1922 թ. գյուղացիական տնտեսություններին վերաբերող նախնական քարտի լրատվությունը դիտենք մի համակարգ (ուստի այդպես է), ապա դրա ենթահամակարգերից ոչ մեկը, որոնց թիվը հասնում է 11-ի, առավել ևս դրանցից առանձնացված ցանկացած էական ցուցանիշ չի կարող հիմք հանդիսանալ գյուղացիության ներքին կառուցվածքը ցույց տալու համար: Նույն պատկերը կստացվի, եթե նախնական քարտի տվյալները դիտենք որպես մի մոդել: Այս դեպքում ենթահամակարգերի տվյալներից կամ օրիգինալ մոդելից պետք է ստեղծել նոր մոդել, որի արդյունքները կիրառելի լինեն օրիգինալ մոդելի համար:

Ահա 11 ենթահամակարգերը, որոնց հիման վրա ստեղծվելու է նոր մոդել.

1. Բնակչությունը (ունի 44 ցուցանիշ, որոնք վերաբերում են գյուղացիական տնտեսությունների սեռատարիքային կազմին, աշխատունակությանը, զբաղմունքին, գրագիտությանը և այլն): Այս ենթահամակարգից առանձնացրել ենք զբաղմունքը 1922 թվականին, աշխատունակների ընդհանուր թիվը:

2. Վարձու տարածությունը (ունի 5 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք տարածության տեսակը, չափը և պայմանները (փողով, պարտքի դիմաց, բերքով և այլն):

3. Վարձու տրված տարածություն (ունի 5 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք տարածության տեսակը (տնատեղ, վարելահող, խոտհարք, պարտեզ և այգի) և պայմանները (փողով, պարտքի դիմաց, բերքով և այլն):

4. Գյուղատնտեսական ինվենտար (ունի 55 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք հող մշակելու գործիքները և փոխադրական միջոցները:

5. Անասնապահություն (ունի 49 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք խոշոր եղջերավոր անասունները, կովերը, բանող եզը, գոմեշը, մանր եղջերավոր անասունները, փոխադրամիջոցը (էշ, ջորի, ուղտ) և բոլոր տեսակի անասունները միասին, ծին և որպես փոխադրամիջոց, և բանող անասուն:

6. Տեղեկություններ տնտեսության վարձու բանվորների մասին արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ (ունի 18 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք բանվորական տարիք ունեցող տղամարդկանց և կանաց քանակը, աշխատանքի պայմանները (տարով, օրավարձով, սեզոնով, հատավարձով):

7. Բույսերի մշակումը դաշտում (ունի 52 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք ցանքատարածությունների քանակը սեփական տարածքում, ընդամենը վարելահող:

8. Բանջարաբույսերի և այլ բույսերի մշակումը տնամերձ տնտեսություններում (16 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք սեփական տարածքում ցանքած բույսերի չափը:

9. Պարտեզ և այգի տնամերձում (ունի 10 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք տարածքի չափը:

10. Հողերի օգտագործումը (ունի 22 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք հողօգտագործման եղանակը (տնովի, համայնական), վարելահողի (ջրովի և անջրովի), խոտհարքի, այգու և պարտեզի, պիտանի հողերի քանակը, բոլոր հողերի քանակը:

11. Տնտեսության հողաբաժանման հողերի ընդհանուր տարածքը դեսյատինով կամ տեղական չափով(ունի 10 ցուցանիշ), որոնցից ընտրել ենք սեփական օգտագործման մեջ գտնվող հողատարածքի չափը և վարձու տրված տարածքը:

Այսպիսով, 1922 թ. գյուղատնտեսական ու հողային համապարփակ վիճակագրության 10 չհամարակալված (գլխանասային) և 278 համարակալած ցուցանիշները վերաբերում են 11 բաժինների և ներկայացնում են մեկ համակարգ՝ իր ենթահամակարգերով, մի օրիգինալ մոդել՝ իր ենթամոդելներով: Դրանցից առանձնացրել ենք գյուղացիական տնտեսությունների սոցիալական կառուցվածքը բնութագրող էական 10 չհամարակալված ցուցանիշներից՝ 5-ը, նաև 278 էական ու ոչ էական ցուցանիշներից՝ 37-ը: Առանձնացված 5 և 37 էական ցուցանիշներից ստեղծվում է նոր մոդել, որը բերնաթափվել է ոչ էական ցուցանիշներից, բայց պահպանվել են էական բոլոր ցուցանիշները: Միաժամանակ իին համակարգի փոխարեն ստեղծվել է նոր համակարգ, որը պահպանել է համակարգային վերլուծություն կատարելու հնարավորությունը:

Հաջորդ փուլում ընտրովիության սկզբունքով տնտեսությունների քանակը որոշելուց հետո նախնական քարտի իմանան վրա էլեկտրոնային հաշվիչ մեքենայի մեջ մուտքագրել նշված ցուցանիշները, մշակել համապատասխան ծրագիր, կամ օգտվել ծրագրավորողի ծառայությունից և ստանալ ելքային տվյալներ, որոնք ճշգրիտ կրնութագրեն գյուղացիության սոցիալական կառուցվածքը 1922 թ.:

*Андраник Варданян, Моделирование как эффективный метод изучения социальной структуры крестьянства Армении в 1922 г. (методологический подход).* - Для исследования первичных карт сельскохозяйственной и земельной всеобщей переписи, проведенной в Армении в 1922 г., для выявления социальной структуры крестьянства целесообразно применение моделирования и математико-статистических методов. При исследовании подобных обширных статистических данных необходимо моделирование информации, полученной с помощью выборочного метода, затем применение метода системного анализа.

*Andranik Vardanyan, Modelling as an effective method of studying the social structure of the peasantry of Armenia in 1922 (a methodological approach).* It is appropriate to use mathematical-statistical method for studying the preliminary cards of agricultural and land overall inventory, held in Armenia in 1922, and for identifying the social structure of the peasantry. While studying such voluminous statistical information it's necessary to model the information obtained through the sampling method, and then to apply the method of systems analysis.

